

ՈՒՇԱՅԱԾ ՍԷՐ

Իդէը և ջանքը, որոնք մարդու ամբողջ էութիւնն են կազմում, նման են անյագ, այրող ծարաւի. մարդկային գոյութեան հիմունքը կարիքն է, պակասը և տանջանքը... Սեանքը՝ ահա նա. «ցանկանալ՝ առանց պատճառի, շարունակ տանջուել, շարունակ մաքառել, չետոյ մեռնել և այսպէս անվերջ դարեր և դարեր, մինչև որ մեր մոլորակի կեղևը պատառ-պատառ ճաքճքոտի և ցրիւ գալ մանր կտորներով»...

Շօպենհաուէր

Տարուայ չորս եղանակներից ես ամենից շատ աշունն եմ սիրում և այն ուշ աշունը, երբ բնութեան մնայլն այնքան մեղմ գրաւչութիւն ունի, երբ արցունքը քաղցր է, վիշտն ախորժ, դուրեկան:

Այս առաւօտ նկատեցի, որ իմ լուսամուտի տակ եղած ծառը իսպառ տերեւաթափ է եղել. խեղճ, դեռ երէկ նա զարդարուած էր. դաշտերն էլ այժմ մահուան վաեմ գեղեցկութիւնն ունին: Ես շտապ հագնւում եմ և դուրս եմ գնում:

Հեռ՜ւ, հեռ՜ւ. ինչ որ կտրուած է մարդկային բնակութիւնից, այն է գրաւիչ: Ես քայլում եմ մենակ մերկացած դաշտերում թօշնած խոտերի վրայ. չորացած սաղարդը ոտներիս տակ մեղմ խշխշում է, ասես երգում է իր օրհասական մեղեդին. գլխիցս վեր, վեր չուող կռունկները մեղամաղձոտ կղղիւնով անիծում են բնութեան անողոր օրէնքների յաջորդականութիւնը, որ կեանքերի սահմանները որոշելու գերազոյն իրաւունքներն ունի:

Շուրջս ամեն ինչ գունատ է, մահատեսիլ. համա-
տարած այդ մռայլ պատկերի վրայ կանաչ մի ծիր, մո-
ռացուած մի խղճուկ ծաղիկը՝ հրքան շատ բան են ա-
սում մարդկային սրտին, հրքան անհուն է նրանց պօե-
զիան, որ լուսում է կեանքի խորհրդից, նրա ամենա-
ծածուկ ծաղբերից, նրա անլուծելի առեղծուածներէից։
Մահամերձ կեանքի վերջին ճիգերն են նրանք, ապրել
ուզող, արեւ, ջերմութիւն, վայելք հայցող վերջին մըր-
մունջը, որով աղերսում է յետաձգել անողորմ անխուսա-
փելին, խնդրում է էլի մի վայրկեան, էլի մի տաք շող-
էլի... էլի...

Ամեն ինչ որ միայնութիւն է, ինչ որ յիշեցնում է
մոռացութիւն, խեղճութիւն, յատուկ է աշնանը և գրա-
ւիչ է։ Օրինակ այս ծառը, այս մենաւոր ուռենին կար-
ծես դողում է մի անորոշ սարսափից. մահու երկիւղն
է այն, որ խաղում է օդի մէջ։ Պատկերը և՛ տխուր է,
և՛ գեղեցիկ. առաջին ցրտերը կապտել են ուռենին իր
զարդերից, հազիւ են երեւում մի քանի խղճուկ կանաչ
տերեւներ, որոնք յուսահատ ճիգով կպած մայր ծառի
կրծքին, օրօրում են ցուրտ քամու առաջ, ասես աղբը-
սում են խնայել իրանց... Նրանց մեղմ սօսափիւնի մէջ
ես լսում եմ կեանքի նոյն անկուշտ կոչը, մահից դո-
ղացող արարածի յաւիտենական երգը՝ «էլի... էլի»...

Ծառի տակ ես նկատում եմ մի գերեզման. «Այս-
տեղ հանգչում է գնդապետ Գլօբը, ծն. 1810-ին և ըն-
կաւ Սաղովալի ճակատամարտում՝ 1866»։ Տապանա-
գիրը կարդում եմ երկու անգամ և 1866 թ. գլխիցս
չէ անցնում, դա իմ ծննդեան թուականն է. մի բոպէ
ինձ տարօրինակ է թւում, որ ես ծնուել եմ նոյն տա-
րին, երբ այս անծանօթ գնդապետն ընկել է կռուի
դաշտում. ո՞վ գիտէ, գուցէ և նոյն ժամին, նոյն վայր-
կեանին, երբ իմ առաջին ճիչն է լսուել, նրա վերջին
հառաչանքը սառել է չրթունքին։ Անհունութեան մէջ
իւրաքանչիւր վայրկենում հրքան վերջին մրմունջներ են
մարում և հրքան նոր ճիչեր են լսում. ապրում են,

ընկնում, տեղ տալիս ուրիշներին և այսպէս դարե՛ր, ուր է գնում տիեզերքը, ուր է գոյութեան խորհուրդը... վախճանը: Վերից թափուած տերևները գունատ սփռոցով պատում են գերեզմանը, շուրջը չորացած խոտեր, և սակայն տեղ-տեղ դուրս են ցցւում տակաւին մի քանի կանաչ ծիլեր, գունատ ծաղիկներ, նրանք կրում են իրանց վրայ մահու գէժ մղուող պայքարի դրոշմը, նրանք ոլորուած, այլանդակուած են իրանց վերջին ճիգերով և թւում է, թէ ես դարձեալ լսում եմ նոյն անվերջ աղերսը՝ «էլի... էլի...»: Օ՛հ, կեանքը շատ է քաղցր և բնութեան օրէնքները շատ են անողոք, անդարձ:

Ես նստում եմ սաղարդապատ այս տապանաքարի վրայ և մտածում եմ հազար ու մի բաներ. «Րբան ա-խորժելի է ուշ աշնանը ամայի դաշտի մէջ երազելի Մնցեալ յուշեր և պատկերներ շարան-շարան գալիս անցնում են աչքիս առաջից: Յիշում եմ, ճիշտ մի այսպիսի օր և մի այսպիսի ծառի տակ թաղեցինք իմ մի ծեր բարեկամին, մի ուրիշ գնդապետ: Խեղճ, գուցէ ոչ ոք նրա պէս իր կեանքի վերջալուսին այնքան ուժով չէ փարել փախչող վայրկեաններին, ոչ ոք այնպէս խորը չէ զգացել մեռնող բնութեան անհուն ցաւը: Եւ այժմ յիշելով նրան այս դաշտի ամայութեան մէջ, երբ շուրջս ամեն ինչ մեռնում է լացով, ես աւելի խորն եմ զգում՝ ապրել ուղող, վարկեաններ աղերսող արարածի այդ անբուժելի ցաւը, հոգեվարքի վերջին մըրմունքը: Ինչպէս մայր մտնող արեւի վերջին շողերը մի առանձին մեղամաղձոտ քնքշութեամբ են փարում լեռների կատարներին, ճիշտ այդպէս ուշ աշնանը ամեն ինչ իւր ոյժերի վերջին թափով փարում է կեանքին և ես լսում եմ իմ չորս կողմում նոյն թախծալի աղերսը՝ «էլի... էլի...»:

Պարոն Արնօլդը, այսպէս էին անուանում նրան այն պանսիօնում, ուր ես պատահեցի նրան առաջին անգամ, այն ծերերից մէկն էր, որոնք չեն հաւատում

իրանց տարիքին, խոյս են տալիս հայելուց՝ ճերմակ մազերն ու դէմքի կնճիռները չը տեսնելու համար և մանաւանդ ատում են սպիտակ միրուքը։ Նա փոքրահասակ էր, մի քիչ կռացած, թէև աշխատում էր ուղիղ պահել իրանը, մանաւանդ՝ երբ կանանց հասարակութեան մէջ էր։ Փոքրիկ, խոր ընկած աչքերում մի ուշացած կրակ կար, որ իւր արագաշարժ թերթերունքները կարծես բորբոքում էին անդադար, որ չը մարի և հաստ վաւաչոտ շրթունքների շուրջը անցեալ խելագար կեանքը մի քանի ծալքեր էր թողել։ Նրա դէմքը միշտ ածիլած էր, միայն վարի շրթունքի տակ և քունքերի վրայ միմի փոքրիկ կօքէտ փունջ կար. սպիտակ մազերը միշտ կարճ կտրած և խնամքով սանրուած ու վրձինած։ Նա հազնում էր ամենավերջին տարազով, շապկի սպիտակ օձիքի վրայ կրում էր լայն, գունաւոր փողպատ, որի վրայ ցցուած էր մի ականազարդ ոսկեայ գնդասեղ։ Խօսում էր արագ-արագ, քայլում էր մանր, արագ քայլերով, ուրախ, անհոգ, զուարճախօս մի ծերունի, որ անում էր ամեն ինչ՝ ջահել երեւուլ համար, և այդ յարատե հոգսը բռնել էր նրա ամբողջ էութիւնը. երեւում էր, որ տարիներն ու հասակը հալածում, տանջում են նրան, բայց նա բոլոր ուժով ծածկում էր իր անհանգստութիւնը։ Իր տարիքից երբէք չէր խօսում, այդ մասին եղած խօսակցութիւնն աշխատում էր փոխել, բայց նրան համարում էին վաթսուներեք տարեկան։ Ասում էին նոյնպէս, որ պ. Արնօլդը հարուստ է, անժառանգ և կենսասէր։

Այստեղ էր նաև մի գերմանացի ուսանող, բոլորովին երիտասարդ, վերին շրթունքը հաղիւ խաւապատ, բայց հասուն մարդու յաւակնութիւններով. նա հպարտ էր մանաւանդ իւր այտի վրայի սպիով, որ հետեանք էր մի մենամարտի՝ գերմանական ուսանողների աւանդական յիմարութեան։ Նա քիչ էր խօսում, իսկ երբ խօսում էր, նիւթը կամ Բիսմարկն էր, կամ Վիլհելմը և շատ յաճախ զինավարժութիւնն ու պարերը, որ նա սո-

վորում էր մասնագետների մօտ: Յետոյ իմացայ, որ նա ապրում էր պանսիօնից դուրս և միայն ճաշերին և ընթերիքներին էր գալիս՝ իբր Ֆրանսերէն սովորելու համար հասարակութեան մէջ:

Հետաքրքիր դէմք էր նաև մի հարուստ տիկին, մի ամերիկուհի, որ «ճանապարհորդում էր հին աշխարհում յիշողութիւններ տանելու՝ նորում երազելու համար», ինչպէս ասում էր ինքը կատակով: Կօքէտ, տղամարդկանց հասարակութիւն փնտրող, ինչպէս լինում են առհասարակ կանայք և մանաւանդ ճանապարհորդող և արկածներ փնտրող կանայք: Ըստ երևոյթին համեստ, բայց ինքն իրան համար անհամեստութեան սիւրպրիզներ ստեղծող, մեղանխօլիայի ներկայացումներ տալու շատ յաջող դերասանուհի, թեթև «ախր», անորոշ «ուհը» շարունակ խամրած չրթունքին, հաճոյակատար, սիրալիր, և այդ բոլորով հանդերձ միշտ մոռացուած, միշտ լքուած, որովհետև իր բոլոր պակասութիւնների հետ երիտասարդ հայեացքները շատ շուտ նկատեցին, որ ձախ աչքը ապակուց է: Նա այն տարիքումն էր, երբ կանայք նմանում են իսպառ բացուած և խամրած ծաղիկների, որոնց թերթիկները հեշտութեամբ տարւում են քամու առաջին շնչով. կիներ այդ տարիքում խորհրդաւորութիւնը կորցրած անհետաքրքրութիւնն է ներկայացում, յայտնի դադանիքը, և վնայ նրան, եթէ ըմբօստէ անխուսափելիի դէմ, նա տանջւում է անվերջ: Այս ամերիկուհին ըմբօստներից էր և տանջւում էր:

Պանսիօնի զարդը և ամենքի հետաքրքրութեան առարկան ալզացի մի ջահէլ օրիորդ էր, որ եկել էր շվեյցարական Աւպերի օգով կազդուրուելու: Ուրախ կենսալից աշարած, շարժուն՝ ինչպէս թիթեռը և շատախօս՝ ինչպէս կաշաղակ, առաւօտից մինչև երեկոյ նրա քրքիջը, ուրախ բացականչութիւնները լսում էին պարտիզում կամ պատշգամբի վրայ այս կամ այն երիտասարդի հետ, որին նա կամ ծաղրում էր, կամ բարակ,

դալար ճիպոտով քնքոյշ հարուածներ էր տալիս ու փախչում: Առանձին, ուժեղ տպաւորութիւն էր գործում այդ աղջկայ մանաւանդ գլուխը: Հարուստ, շագանակագոյն խոպոպները գեղարուեստական անկարգութեամբ ցաք ու ցրիւ ծածանւում էին նրա կլոր, լիքը ուսերի վրայ, երբ նա վազում էր կամ սաստիկ ծիծաղում, իսկ երկու սիրուն ուրներ մի տեսակ պսակ էին կազմում գրաւիչ ճակատին. այդ խոպոպների հովանու տակ նրա բոցոտ և մի քիչ խորամանկ աչքերն ստանում էին ինչ որ խորհրդաւոր և զօրեղ արտայայտութիւն: «Մեղուզա», մտածեցի ես առաջին անգամ նրան տեսնելով, և ճշմարիտ, այդ գլուխը, այդ սիրուն, արտայայտիչ աչքերը մի բան ունէին, որ դիւթել, քարացնել կարող էր ինչպէս առասպելական Մեղուզան:

Սրանցից և ոչ մէկի անցեալն ինձ չէր հետաքրքրում, այնուամենայնիւ նրանցից երկսի՝ ալգասցի օրիորդի և պարոն Արնօլդի պատկերը դեռ վառ է իմ յիշողութեան մէջ, շնորհիւ այն տարօրինակ սիրոյ, որ ծեր գնդապետը տածում էր դէպի գեղեցիկ ալգասուհին, կամ Մեղուզան, ինչպէս անուանեցի նրան, և ահա թէ ինչպէս.

Դեռ առաջին օրը՝ երբ ի միջի այլոց ինձ ներկայացրին օրիորդին, սեղանակիցները մի ճնշուած ծիծաղ բարձրացրին, օրիորդը կարմրեց, նստեց և գլուխը քաշ ձգեց: Ես վիրաւորուեցի այս տարօրինակ ընդունելութեամբ, բարեբախտաբար տանտիկինը՝ մի հասակ առած և փորձուած կին, այդ զգաց և մէջ ընկաւ.

— Դիտէ՛ք, պարոն, ասաց նա ժպտալով, այստեղ մենք ամենքս մի տան պէս ենք, նորեկին էլ ընդունում ենք ընտանեբար, ինչպէս նոյն տան անդամ (ծառօթ լեզու էր, բոլոր պանսիօններում մի տան պէս են). օրիորդը, որի հետ դուք այժմ ծանօթացաք, սիրում է անուններ դնել իր բոլոր ծանօթներին, մինչև այժմ մեր բոլոր փորձերը՝ նրան մի լաւ անուն թխելու, անյաջող են անցել: Բայց մենք դեռ չենք յուսահատուել և

ամեն անգամ, երբ նոր պանսիօնէր է յայտնուում, ամենքս էլ ուրախանում ենք, յուսալով, թէ նոր անձը կարող է վերջապէս մեզ գոհացնել՝ սրան մի լաւ անուն դնելով: Ահա թէ ինչո՞ւ ամենքը ծիծաղեցին, երբ օրիորդը ներս մտաւ և ձեզ հետ ծանօթացաւ: Այժմ հերթը ձերն է. մտածեցէք այսօրուանից օրիորդին մի յաջող անուն, եթէ ձեզ անախորժ չէ այդ աշխատանքը:

— Տիկին, ասացի, դա կարող է անախորժ լինել օրիորդին իրան և ոչ ինձ:

— Ամենեւին, պարոն, մէջ ընկաւ օրիորդը, ինձ համար այդ բոլորովին մի և նոյն է, անուանեցէք ինձ, ինչ կ'ուզէք, և կը տեսնէք, որ ինձ չի կպչի: Գիտցէք սակայն, որ մի քանի օրից ես կը փորձեմ ձեզ մի այնպիսի անուն դնել, որ դուք գոհ կը մնաք ինձանից:

— Ա՛խ, եթէ այդպէս է օրիորդ, պատասխանեցի, թո՛յլ տուէք ասել, որ ես ամենեւին կարիք էլ չունեմ մի քանի օր սպասել ձեզ անուն դնելու համար, ես կարող եմ ասել հէնց այժմ, եթէ կամենաք:

— Միանգամայն ազատ էք, և ինձ մեծ հաճոյք կը պատճառէք:

— Ասացէք, ասացէք, ձայն տուին այս ու այն կողմից միւսները:

— Մեղուզա՛ն:

— Մեղուզա՛ն, Մեղուզա՛ն, բացականչեցին ամենքը. ինչ լաւ է, որքան յաջող, վերջապէս... Մեղուզա՛ն, Մեղուզա՛ն:

Օրիորդը կարմրեց այդ ընդհանուր բացականչուածիւններից, գլուխը նորէն քաշ ձգեց, ժպտաց, ինձ նայեց գոհութեամբ. նրան հաճելի էր այդ անունը:

— Շնորհակալ եմ, պարոն, ասաց նա, ես վրէժխընդիր կը լինեմ նրանով, որ կ'աշխատեմ առաջինը ձեզ քարացնել:

— Փոյթ չէ, օրիորդ, հայեացքներ կան, որոնցով քարանալը կենդանի մնալուց շատ աւելի արժէ:

Օրիորդը դարձեալ կարմրեց և լռեց. այն օրուա-

նից նրա անունը մնաց Մեղուզա և նա հպարտութեամբ էր կրում իր այդ նոր անունը:

Այնուհետև սեզօնն անցնում էր միշտ ուրախ, միշտ աղմկալի. խօսակցութեան նիւթը գլխաւորապէս օրիորդ Մեղուզան էր և նրանից առաջ եկած ընդհանրացումները համեմատ բարոյագիտական և գեղադիտական մերթ կարկատուն, մերթ յաջող խորհրդածութիւններով: Սէրը քննւում էր բաղմակողմանի ձևով և դրա հետ միասին փոքրիկ ակնարկներ էին ուղղւում արական կամ իգական սեռին՝ նայելով թէ խօսողը կին էր թէ տղամարդ, ինչպէս այդ սովորաբար տեղի է ունենում ամեն անգամ, երբ երկու սեռից բաղկացած մի ուրախ հասարակութիւն խօսում է սիրուց և մօրալից: Մեղուզան և իր առասպելը անսպառ նիւթ էր տալիս սրախօսութիւնների, հաճոյախօսութիւնների և օրիորդը իր յաջող պատասխաններով զուարճացնում և ընդհանուր գոհութիւն էր պատճառում: Այս ընդհանուր ուրախութեանն ամենից քիչ մասնակցողը գերմանացի ուսանողն էր, մանաւանդ՝ երբ խնդիրն օրիորդի շուրջն էր դառնում, նա մեծաւ մասամբ լուռ էր մնում, աշխատում էր չը նայել Մեղուզային, բայց նրա փոխարէն ամենից աւելի աղմուկ հանողը, ուրախացողը ծեր գընդապետն էր, պ. Այնօլդը: Դերերի մի տարօրինակ փոփոխութիւն կար այդ երիտասարդի և այդ ծերունու մէջ, որոնցից առաջինը կարծես դիտմամբ ուխտել էր ծեր ձևանալ և միւսը՝ երիտասարդ. զարմանալի էր:

Գնդապետը սովորաբար տեղ էր բռնում օրիորդ Մեղուզայի կողքին, և աշխատում էր ըստ ամենայնի հաճելի լինել, ծառայել նրան, նախատեսել նրա ամենաանցին ցանկութիւնները, ափսէ մատուցանել, հաց մեկնել, գինի ածել նրա բաժակը: Այդ ժամանակ իմ կողքին նստած ամերիկուհին սովորաբար կամացուկ ինձ ասում էր.

— Ծերունին կը խելագարուի, այ կը տեսնէք:

Ապա խորհրդաւոր տոն ընդունելով աւելացնում էր, առողջ աչքը արագ-արագ թարթելով:

— Զը գիտէք, թէ ինչ մութ բան կայ այդ յարաբերութեան մէջ. կապը կտրած աղջիկը այդ խեղճ ծերունուն իսպառ գժուացրել է:

Եւ ճշմարիտ ծերունին խելագարի պէս էր, երբ օրիորդը նրա կողքին էր: Երբեմն նա մոռանալով հասարակութեան ներկայութիւնը, իր մանր, կլքոտ աչքերը սեւեռում էր օրիորդին, մանաւանդ երբ սա խօսում էր. այդպէս նայում էր երկար անթարթ, յափըշտակուած նրա դէմքով, մազերով, ձայնով շատ ժամերով. կանացի այդ հմայիչ պատկերից ասես մի անուշահոտ բուրմունք էր արձակում և շմեցնում այդ ծեր ուղեղը, նրան կաշկանդում, գերի դարձնում: Օրիորդն առանց նայելու, լաւ զգում էր իր վրայ ուղղուած այդ հայեացքը, նա դառնում էր յանկարծ, նոյն ձևով նայում էր իր ծեր սիրահարին մի երկու վայրկեան, ապա ցընցում էր իր սիրուն խոսուկաները և յետ ընկնելով աթոռի վրայ բարձրաձայն ծիծաղում:

— Սրան պիտի քարացնեմ: չէ՞ որ ես Մեղուզան եմ, բացականչում էր նա:

Այդ բոպէներին սեղանը ընդհանուր ծիծաղով ձայնակցում էր նրան բացի ամերիկուհուց, որ «այդ անախորժ քրքիջը անվայել էր գտնում մի ջահել օրիորդի համար»:

— Աներեւ, մթմթում էր նա:

Ամերիկուհին նախանձում էր, և այն կանացի թունոտ նախանձով: Նա նախանձում էր այդ աղջկայ ջահելութեանը, նրա գեղեցկութեանը, նրա մազերին, աչքերին, մի խօսքով այն բոլորի համար, ինչ որ գրաւիչ էր դարձնում նրան և ինչից որ ինքը զուրկ էր: Համոզուած էմ, որ նա ատում էր նաև բոլոր սեղանակից տղամարդկանց, օրովհետեւ ոչ իր ամեն օր փոփոխուող դարդերը, ոչ իր պչրանքն ու անուշահոտ իւղերը և ոչ իր դիտաւորեալ խօսքի դարձուածքները չէին կարողա-

նում նրան ընդհանուրի ուշադրութեան առարկայ դար
 նել: Օրիորդ Մեղուզայի ամենեւին փոյթն էլ չէր ամ
 րիկուհու թունոտ հայեացքները, նրա մթմթոցը, սր
 նրա ականջին փսփսայք: Այդ չարածնի աղջիկը կարծե
 պայքարի հրաւերը սիրով յանձն առած և իր հակառ
 կորդուհուն աւելի կատաղեցնելու համար կապուել է
 ծերունու հետ, թողել էր անուշադիր երիտասարդներին
 կամենալով ասել՝ «Ասպարէզն ազատ է, եթէ կարո՞ւ ես
 Բայց հակառակորդուհին անգոր էր, չէր կարողանու
 միայն նախանձում էր և զայրանում, աշխատելով որ
 է կերպով վրէժխնդիր լինել, խայթել: Մի անգամ խ
 սում էին այն մասին, թէ կանայք աւելի սէր են տա
 ծում երբեմն դէպի տանու կենդանիները, քան թէ դ
 պի տղամարդիկ:

— Իրաւունք ունին, ասաց ամբերիկուհին. տան
 կենդանիներ կան, որոնք տղամարդկանցից աւելի հաւ
 տարիմեն: Ինձ գալով, օրինակ, ես սիրում եմ ամեն մ
 շուն, որ մեծ է, շատ մեծ, որ առիւծ է յիշեցնու
 ոյժն ու հաւատարմութիւնը միացած է մի այդպիսի շա
 մէջ. ի՞նչ աւելի գրաւիչ բան:

— Իսկ ես, ասաց օրիորդը, ատում եմ շներին, ե
 սիրում եմ մեծ, սիրուն աքաղաղներին:

— Մէկ չէ, փետրաւոր կամ անփետուր, վրայ բե
 րեց ծերունին և ոտի կանգնելով բարձրաձայն խօսե
 աքաղաղի պէս:

Այս արդէն որքան սրամիտ էր, նոյնքան և ան
 սպասելի էր և չափազանց անպատշաճ. ամբերիկուհին
 լաւ առիթ գտաւ:

— Օրիորդ, լաւ որ դուք էլ ինձ պէս շուն չը սի
 րեցիք, ասաց նա հեգնութեամբ. պ. Արնօղբը չը պիտ
 կարոցանար գուցէ նոյն հաճոյքը պատճառել ձեզ ի
 դեղեցիկ ձայնով:

Ակնարկը չափազանց կծու էր. ծերունին խոժո
 ուեց, օրիորդը վիրաւորուեց և զայրացած շեշտո
 պատասխանեց.

—Տիկին, դուք պիտի գիտնաք, որ մենք երկուով երբէք չենք կարող մեր սիրոյ առարկայի մէջ որ և է նմանութիւն ունենալ. ձեր տարիքը, ձեր փորձառութիւնը և ձեր ճաշակը ձեզ անպայման առաւելութիւն են տալիս. գոհ էք այժմ:

Երկու կանանց մէջ թշնամութիւնն այնուհետեւ բացարձակ եղաւ:

Կասկած չը կար, որ ծեր գնդապետը խելագարի պէս սիրում էր օրիորդին, բայց ինչ որ ամենիս զարմանքն էր շարժում և հանելուկ թւում, այդ այն էր, որ օրիորդն էլ ըստ երևոյթին անտարբեր չէր դէպի այդ ուշացած սէրը և նոյն իսկ չէր աշխատում թագցնել այդ: Ամեն օր ընթրիքից յետոյ նա ծերունու հետ մի երկու ժամ անց էր կացնում պարտիզում և շատ անգամ մինչև ուշ գիշեր ծառերի տակից լսում էր նրա ուրախ քրքիջը, նրա ոտնաձայնը: Նա վազվզում էր այս ու այն կողմը, կախկախում էր ճիւղերից և օրօրում, կամ ստիպում էր ծերունուն, որ նոյնն անի, նրան վազեցնում էր, քրքշալով ծիծաղում նրա շարժումների վրայ և ապա հրամայում, որ նստի անշարժ և քարանայ իր հայեացքի առաջ: Ծերունին հնազանդւում էր վարժուած շան պէս:

Ոչ ոք չը գիտէր այդ յարաբերութիւնների գաղտնիքը, բոլորը ինչ որ յայտնի էր, այդ այն էր որ նրանք միասին էին յայտնուել պանսիօնում, որպէս ընկեր ճանապարհորդներ: Ամերիկուհին սակայն ամենքիս հաւատացնում էր որ, այդ Մեդուզան ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի «սովորական աղջիկ, և ոչ թէ օրիորդ», որ կապուել է ծեր գնդապետի հետ, նրան խօսք է տուել հետն ամուսնանալու՝ նրա ժառանգը դառնալու պայմանով, և որ ծերունին էլ համաձայն է իր հարստութիւնը նրան կտակել. այժմսպասում են գնդապետի պառաւ կնոջ մահուան, որի օրերը համարուած են մի ծանր օպերացիայից յետոյ:

—Այսպէս են տղամարդիկ, աւելացնում էր նա, այդ «քաւթառ» կիսախելագարը կեանքից դեռ չէ կշտացել,

իր խեղճ մահամերձ կնոջը թողել է հիւանդանոցում և ինքը ճանապարհորդում է այս կապը կտրածի հետ։

Ճիշտ էր ասում այդ բոլորը ամերիկուհին, թէ ոչ, և եթէ ճիշտ էր, նա սրտեղից դիտէր այդ բոլորը, այդ դժուար էր իմանալ, ո՞վ կարող է սահման որոշել կանացի հնարամտութեանը. իսկ երբ կինը կամենայ վրէժխնդիր լինել, ո՞վ կարող է մեղմել նրա լեզուի թոյնը։ Ամերիկուհուն չէինք հաւատում, հանելուկը հանելուկ մնաց և անցան դարձեալ մի քանի օրեր։

Մի գեղեցիկ առաւօտ միտք ծագեց վերելք կատարել Մօն-Պելլրէն լեռան կատարը։ Պանսիօնի բոլոր հասարակութիւնը յանձն առաւ, մեզ ընկերացան նաև մի քանի հարեաններ։ Լեռան լճի վրայ չրճող նաւերը մեզ շուտ տեղափոխեցին լեռան ստորոտը։ Վերելքը շատ հեշտ չէր, բայց ոչ մէկը չէր ուզում միւսից յետ մնալ, մանաւանդ որ հասարակութիւնը բաղկացած էր երկու սեռից։ Վերելքի այդ պաշարի մէջ ամենից ծանրը գնդապետի վիճակն էր. նա աշխատում էր անպատճառ Մեղուզայի կողքին դնուել, բայց հակառակի պէս կայտառ ու արագաշարժ օրիորդը ցատկոտում էր այժեամի պէս և ամենից առաջ էր։ Խեղճ ծերունին մի առ ժամանակ հեալով, քրանած հետեւում էր նրան, բայց վերջ ի վերջոյ յետ մնաց, կանգ առաւ, մինչդեռ աղջիկը մի հարիւր քայլ աւելի բարձրանալով յետ դարձաւ նայեց և սկսեց ծիծաղել։ Նա ձեռքում բռնած ունէր մի լեռնային ծաղիկ։

— Նրան՝ ո՞վ ամենից շուտ կը հասնի ինձ, կանչեց նա։

Ամենքս էլ համոզուած էինք, որ այդ մրցութեան հրաւերը բացառապէս երիտասարդներին է ուղղուած, որովհետև ծեր գնդապետն ըստ երևոյթին իսպառ ուժաստատուած նստել էր մի քարի վրայ, հանգստանում էր։ Մի քանի երիտասարդներ և գերմանացիին չափ ընկան լեռն ի վեր. բայց որչափ մեծ եղաւ բոլորիս զարմանքը, երբ ծերունի Արնօլդը վեր ցատկեց տե-

ղից և վերջին ճիգերը հաւաքելով, նոյնպէս վազել սկսեց դէպի վեր: Այս տեսնելով վազողները բոլորը կանգ առան ծիծաղելով բացի գերմանացուց, որ շարունակում էր բոլոր ոյժով վեր ելնել: Մեղուզան վերից ծիծաղում էր ծաղիկը մեկնած, ներքևից ծիծաղում էր մնացած բազմութիւնը. իսկ լեռնալանջի վրայ երկու հոգի՝ մէկը ծեր, իսկ միւսը երիտասարդ, վազում էին հս վազում: Սերունդների մի մրցութիւն էր կատարում, հինը չէր ուզում տեղի տալ, նա աշխատում էր դեռ իր տեղը պահել արևի տակ, դեռ վայելել կեանքը. իսկ նորը՝ այդ անակրնկալ դիմադրութիւնից կարծես աւելի զայրացած, կատաղի ոստիւններ էր գործում դէպի որսը՝ երիտասարդին յատուկ բոլոր կոբովով, բոլոր ուժով: Տեսարանը յուզիչ էր. մարդկային երկու սերունդներ խելագարի պէս վազում էին դէպի վեր, վեր, կեանքի խաբուսիկ իլլիւղիան գրկելու, մի վաղանցուկ, մի խղճուկ ծաղիկ, որի թերթերը շուտով տարուելու էին քամու շնչով դէպի եթերի անսահմանութիւնը:

Ծեր գնդապետի մէջ զարթնել էր զինուորականի բիրտ, չը զիջող ոգին. նա տարօրինակ էր, նա զարմացնում էր եռանդի այդ յանկարծական բռնկումով. թուում էր, թէ այդ ծաղիկ ստացողը կը խլի նրանից իր հոգին, իր կեանքի էութիւնը, այդ գեղեցիկ աղջիկը և իր գերեզմանը կը փորի: Եւ նա վազում էր յուսահատ, օրհասական թափով: Թէ վերևում և թէ ներքևում ծիծաղը դադարեց. այդ տեսարանը մի բան ունէր, որ արգելում էր ծիծաղել, այդ ոտների արագ, շրուտ շարժումների մէջ, այդ հեռոցների մէջ, այդ քրտնաթոր ճակատների, այդ ծռմուռող մէջքերի վրայ մի ինչ որ խիստ բան կար, յաւիտենական տրագեդիան էր կրկնում: սեռի յարատւութեան համար կոյր եռանդի, կոյր կամքի հզօր պոթիկումն էր, որ իշխում էր թէ գերակատարների և թի հանդիսատեսների մտքերի վրայ. անհնա-

ըին էր ծիծաղել: Վազում էր երիտասարդը, յետ չէր մնում և ծերունին...

Էլի մի քանի վայրկեան և նրանք երկուսով էլ քրտնաթոր, հեալով կանգնած էին Մեղուզայի առաջ, ով առաջ հասաւ, այդ դժուար էր որոշել, և օրիորդը շուարած, մտախոհ մնացել էր, սպասելով մեզ, որպէս զի հասարակութիւնը որոշում կայացնի:

— Ես չը գիտեմ ով առաջ հասաւ, ասաց նա մեզ. որին պիտի տալ ծաղիկը:

— Ինձ, որովհետեւ, ես հեռուից վազել սկսեցի, ասաց գերմանացին:

— Ո՛հ, պ. Արնօլդին կը հասնի, մէջ ընկայ ես. նա թէեւ աւելի մօտ էր, բայց մի մոռացէ՛ք ձեր և նրա տարիքի տարբերութիւնը:

Ծերունին շնորհակալութեան մի ակնարկ ձգեց ինձ վրայ. խեղճ, սրբան շատ արժէր նրա համար այդ ծաղիկը: Մեղուզան շարունակում էր անվճռական մնալ. նա զգում էր, որ խնդիրը սովորական զուարճութեան սահմանից դուրս է եկել և լուրջ բնաւորութիւն է ընդունել. նա դարձեալ մի բոպէ մտախոհ նայեց այդ երկու տանջուած դէմքերին, որոնցից իւրաքանչիւրն իր քրտինքի վարձն էր ուզում, ապա մէկէն ցնցեց իր խոպոպները, կարծես մի անախորժ միտք հալածելու համար, ձեռքի մի շարժումով փետեց ծաղիկը և նրա թերթիկները ցանեց երկրի գլխին և ինքը փախաւ անյայտացաւ դէպի վեր:

— Դե՛, բացականչեց ամերիկուհին:

— Բրնձ, ծափահարեցին միւսները. արդար բաժանեց:

Երկու մրցակիցները շուարած գլխակոր մնացին, բայց ծերունին մանաւանդ առանձնապէս խոժոռուեց:

Քիչ յետոյ խումբը հասաւ օրիորդին, որ նստած հանգստանում էր անդադար յետ-յետ տանելով քրտնած ճակատից մազերի փնջերը: Նա մտախոհ էր:

— Գիտէ՛ք ինչ, ասաց նա յանկարծ գլուխը բարձ-

րացնելով. ես այնպէս յոգնած եմ, այնպէս յոգնած, որ էլ բարձրանալ չեմ կարող, մի քիչ գնացէք, ես կը հանգստանամ և ձեզ կը հասնեմ:

— Եկէք օրիորդին ձեռնափայտի վրայ բարձրացնենք տաններ, առաջարկեց մի երիտասարդ:

— Տաններ, տաններ, բացականչեցին մի քանի հոգի:

Գերմանացի ուսանողը մեկնեց իր ձեռնափայտը. ընդհանուր ծիծաղ բարձրացաւ, երբ գնդապետը առաջ անցաւ շտապով և բռնեց ձեռնափայտի միւս ծայրից: Ի զուր անցան իմ ջանքերը նրան յետ կանեցնելու այդ մտադրութիւնից: Նրանք փայտի վրայ դրին մի վերարկու, օրիորդը նստեց, երկու ձեռքը ձգեց իր երկու կողմի պարոնների ուսերին և այսպէս սկսեցին բարձրանալ: Ուրեմն պայքարը դեռ չէր դադարել. տարօրինակն այն էր, որ միշտ լուռ և անտարբեր գերմանացին այսօր առանձնապէս ճակատող դիրք էր ընդունել և ծերունին զինուորականի հոտառութեամբ այդ զգալով, կարծես որոշել էր մինչև վերջին շունչը կռուել: Նրանք մի տասն րոպէ այսպէս գնացին, ծերը կամաց-կամաց սկսում էր երեբալ, օրիորդի փոյթը չէր, նա չարունակում էր նստած մնալ. դարձեալ մի քանի րոպէ, ծերունու ոտքը մի քարի դիպաւ, նա ընկաւ երեսի վրայ, օրիորդը հետը: Ամենքը խառնուեցին. գերմանացին չարացաւ, գնդապետը կարմրեց, երբ տեսաւ մանաւանդ որ օրիորդի մատը քերցուած է և արիւն է գնում. յուզմունքի մէջ նա մօտեցաւ, բռնեց օրիորդի ձեռքը, բայց չը գիտէր ինչ անէր, գերմանացին հանեց իր մետաքսէ թաշկինակը, պատռեց և վերքը փաթաթեց: Ծեր գնդապետի դրութիւնը դարձաւ անտանելի, ամօթահար ու յոգնած. նա կատաղաբար նայեց ուսանողին և այնուհետև բոլոր զբօսանքի ժամանակ ընդհանուր տրամադրութիւնը չը վերականգնուեց. մի բան կար, որ ճնշում էր ամենքին, ճնշուած էր երևում նաև օրիորդը: Ամենքն շտապում

էին շուտ վերադառնալ և հազիւ կատարին հասած՝ ըսկսեցինք ցած գալ և գէպի տուն գնալ: Ուրախ գնացինք, անտրամադիր վերադարձանք:

Օրեր անցան. ծեր գնդապետի անհանգստութիւնը էլ չը փարատուեց, նա նոյն իսկ աւելի և աւելի մոայլուում էր: Թէև սեղանի ժամանակ նա աշխատում էր նոյնպէս ուրախ, նոյնպէս հաճոյակատար երեւալ, ինչպէս առաջ, բայց չէր կարողանում թագցնել իր ներքին խռովութիւնը, սրտում մի որդ էր բուն դրել և կրծում էր: Նա կասկածում էր գերմանացի ուսանողից, այդպարզ էր, բայց այդ երիտասարդը ոչ մի բոլէ օրիորդի հետ մենակ չէր մնում և ես չը գիտէի, թէ ինչի վրայ է հիմնուած այդ կասկածը. մտածում էի, որ ամերիկուհին դեր է խաղում հաւանականաբար, և ճշմարիտ, որքան աւելի էր անհանգստանում՝ ծերունին, նոյնքան աւելի էր ուրախանում ամերիկուհին. կարծես նա սպասում էր մի շատ ուրախ բանի:

Դեռ առաջին օրերում մի անբուն անցրած գիշեր ես նկատեցի, որ իմ սենեակից անմիջապէս վեր գլտնուող սենեակում ինչ որ իրարանցում է կատարւում. կէս գիշերից յետոյ մի լուսամուտ բացուեց, փակուեց զգուշութեամբ, մի դուռ հազիւ բացուեց և խփուեց նոյն զգուշութեամբ, ապա ամեն ինչ լուեց: Զիմանալով թէ ով է ապրում այնտեղ, ես անտարբեր եղայ գէպի այդ բոլորը: Օրեր յետոյ, երբ իմացայ որ դա օր. Մեդուզայի սենեակն է, ակամայ ինձ զգացի այն մարդու յիմար դրութեան մէջ, որ գիտէ թէ պատի յետևում մի բան է կատարւում, իսկ թէ ինչ, այդ չի կարողանում իմանալ և սրտատրոփ նայում է անթափանցիկ ու համր պատին: Արդեօք ծեր գնդապետն էր ներս գնում այնտեղից կէս գիշերին, թէ օրիորդն էր դուրս գնում մի ուրիշի մօտ: Առաջին ենթադրութիւնն ինձ իսկոյն թուաց անհիմն, ծերունին իմ հարեան սենեակումն էր և ես ամեն երեկոյ լսում էի, թէ ինչպէս օրիորդին նախասենեակում բարի գիշեր ասելուց յետոյ նա ներս

էր մտնում և իսկոյն յետոյ լսւում էր խռմիոցը, որ այնպէս յատուկ է ծերերին, և համարեա մինչև լոյս նա խռնագնում էր: Երկրորդ ենթադրութիւնն աւելի հաւանական էր. բայց ո՞ւր էր գնում այդ օրիորդը կէս գիշերին մենակ, ո՞ւմ մօտ, և ի՞նչպէս: Այս հարցերը կամաց-կամաց ինձ զբաղեցնում էին, ինչո՞ւ, ես այդչը գիտէի, ես ոչ մի կապ չունէի այդ օրիորդի հետ, ոչ մի զգացմունք չէի տածում դէպի նրան, չէի նախանձում ոչ ոքի, ում կը պատկանէր նա, այդ իմ փոյթը չէր, ինչո՞ւ էի ուզում անպատճառ իմանալ, թէ ի՞նչ է անում, ո՞ւր է գնում, ո՞ւմ հետ... Պարզ հետաքրքրութիւն է երեւի իմ կողմից, մտածում էի ինքս ինձ. մի բան, որ յատուկ է ամենին, ուրիշ ի՞նչ կարող է լինել: Ո՛չ, կ'ասեմ ես այժմ. դա պարզ հետաքրքրութիւն չէր, որովհետև պարզ հետաքրքրութիւն չը կայ աշխարհիս երեսին: Այն՝ ինչ որ դարերի գործադրութիւնից պարզ, անմեղ հետաքրքրութեան կերպարանք ունի մեր աչքում, այժմս էլ մենք սիրում ենք այդպէս ընդունել, դա իսկապէս նոյնքան եսական, նոյնքան անձնական հիմունքներ ունի, որքան և ամենաչար հետաքրքրութիւնը: Ես անգիտակցաբար, առանց ինքս ինձ լաւ հաշիւ տալու, երեւի նախանձում էի, այլապէս ինչի՞ս էր հարկաւոր իմանալ, թէ ո՞ւր է գնում այդ օրիորդը: Երբէք, երբէք մի տղամարդ անտարբեր չէ, թէ ում է պատկանում մի գեղեցիկ կին, հակառակ բացատրութիւնները փարիսեցիական են և կեղծ բարոյագիտութեան արգասիք: Խանգոտութիւնը իւրաքանչիւր արուի, ինչպէս և իւրաքանչիւր էգի գոյութեան հիմքերից մէկն է. յարատեւ, անողորմ պայքար կայ արունների մէջ էգերի համար և էգերի մէջ արունների համար: Իւրաքանչիւր կին չարաչար տանջւում է, երբ նկատում է մի ուրիշ կնոջ որ և է առաւելութիւն տղամարդ գրաւելու համար. գեղեցիկ սեռի երկու անձանօթ ներկայացուցիչներ իրար պատահելիս ուշադիր հայեացքով նախ քննում են իրար զգեստն ու զարդերը, հագնուելու ձևը,

գլխի սանրուածքը, ինչո՞ւ. որովհետեւ նրանք հակառակորդներ են, դարաւոր պայքարն է այն արուի տիրապետութեան համար, ինչպէս որ ոչ մի տղամարդ չի կարող առանց գէթ մի փոքր նախանձի տեսնել մի ուրիշ տղամարդի հետ թեւանցուկ մի գեղեցիկ կին: Ահա թէ ինչո՞ւ համար էի ես հետաքրքրուած այդ օրիորդի գիշերային արկածով. այժմ ես այդ շատ լաւ զգում եմ, այն ժամանակ անդիտակից էի, ինքս ինձ խաբում էի: Եւ այսպէս ես ուզում էի իմանալ, թէ ուր է գնում օրիորդը, և ինչ որ ամենից տարօրինակն է, որոշել էի յարմար առիթին հետեւել նրան, յագեցնել ինձ այրող հետաքրքրութիւնը: Բայց բախտին հաճելի եղաւ, որ այդ բանը ես իմանամ առանց անձնական ձեռներեցութեան, առանց ինձ անախորժութեան ենթարկելու:

Մի երեկոյ ես լաւ լսեցի, թէ ինչպէս ծեր գնդապետը ներս մտաւ իր սենեակը նախասենեակում օրիորդի հետ իրար «բարի գիշեր» մաղթելուց յետոյ, լսեցի, թէ ինչպէս նա հանեց ոտնամանները և հագաւ հողաթափերը, ինչպէս մարեց իր ճրագը, բայց չը քնեց: Երկար ժամանակ ես պարզ ու որոշ լսում էի նրա ոտնաձայնը. նա քայլում էր դռնից մինչև պատուհան, այնտեղ մի փոքր կանգ էր առնում, երեւի նայում էր դէպի դուրսը, ապա յետ էր դառնում և կրկին քայլում դէպի դուռը և այսպէս շարունակ. նա անհանգիստ էր, ինչո՞ւ...

Ես որոշեցի անկողին չը մտնել, սպասել և տեսնել, թէ ինչ է լինելու, ինչո՞ւ է թափառում ծերը խաւար սենեակում: Երկար նստած էի գլուխս քաշ արած և մտածում էի հազար ու մի բաներ: Քիչ առաջ այս անհանգիստ ծերը և այն օրիորդը իրար շատ բնական, շատ քաղցր տոնով բարի գիշեր ասացին, մտածում էի ես, իրար չը խաբեցին արդեօք:

Յետոյ աչքս ընկաւ անկողնիս վերեւ կախուած մի պատկերի. ես երբէք ուշադրութիւն չէի դարձրել, թէ

ինչ է ներկայացնում այն, գիտէի, որ պանսիօնների և հիւրանոցի պատերի զարդերը միայն զայրոյթ կարող են զարթեցնել, ուստի չէի նայել: Այժմ նայեցի մի կերպ ժամանակն անցկացնելու համար, նիւթը վերցրած էր Հիւդօի Հերնանիից, այն մօմենտը ներկայացրած, երբ ծեր ու սիրահարուած դուքս Դօն-Դօմեցը՝ իր ջահէլ նշանած գեղեցիկ Դօնա-Սօլային բռնում է նրա սիրականի՝ երիտասարդ Հերնանիի հետ: Դուքսը կանգնած է շէմքի վրայ, ձեռները ծալած կրծքին, մազերը և միրուքն անկարգ, աչքերից կայծեր են ցայտում, մինչդեռ յանցաւոր զոյգը՝ ոտնատակ տալով ամուսնութեան ընդունուած կարգերն ու ամթիւածութիւնը, շարունակում է օրօրուել հեշտութեան և վայելքի գրկում, երկու սիրահարների շրթունքները մի երկար, կրքոտ համբոյրով դեռ միացած են. նրանք ոչինչ չեն տեսնում, ոչինչ չեն լսում, երիտասարդ կեանքն է խօսում: Ինչ ասել է նրա հզօր թափի առաջ մի ծերի զայրոյթ, ընկերութեան ստեղծած կարգեր: Պատկերն ինձ գրաւում է, ես մօտենում եմ և նրա տակ կարդում եմ հետեւեալ տողերը նոյն դրամայից. Դօն-Դօմեց. — «Ինչ հեգնութիւն, ծեր օրերի կազ սէրը դնում է մեր սրտում՝ այսքան բոց և հեշտութիւն, վերակենդանացնում է հոգին, մոռանալով մարմինը»:

Որքան տխուր զուգադիպութիւն. հարեան սենեակում այդպէս անհանգիստ քայլողը նոյնպէս մի ծերունի Դօմեց չէ... յոգնած, ուժասպառ մարմնի մէջ բացաւ հոգին չէ, որ խլել է այդ թշուառ ծերունու քունը և արգեօք սա էլ չէ աշխատում բռնել իր նշանածին մի Հերնանիի հետ: Երկար տեւեց այդ դրութիւնը. կէս գիշերն անցաւ արդէն, ծեր զնդապետը դեռ քայլում էր խաւար սենեակում: Նայեցի ժամացոյցին, առաւօտեան ժամի 1-ն էր. յանկարծ վերի սենեակում լսուեց ինձ ծանօթ թրխկոցը, ես ցնցուեցի և շտապով հրագս մարեցի. մի լուսամուտ բացուեց և փակուեց նոյն զգուշութեամբ, ապա ես լսեցի կանացի

Թեթե ոտնաձայներ, շրջազգեստի խշխշոց իմ բաց լուսամուտի տակ և ամեն ինչ լռեց։ Երկու րոպե յետոյ ես լսեցի, թէ ինչպէս ծեր գնդապետը զգուշութեամբ դուրս գնաց և իջաւ պարտէզ։ Ես կամացուկ մօտեցայ լուսամուտին, աշնանային տխուր գիշեր էր, երկինքը տեղ-տեղ պատած էր մութ ամպերի պատառներով, որոնց տակ մերթ թագնուում և մերթ յայտնուում էր լուսինը, պաղ-պաղ լուսաւորելով պարտէզը և տխուր ու խորհրդաւոր ստուերներ կազմելով ծառերի նօսրացած սաղարգների տակ. երբեմն էլ նա իսպառ ծածկւում էր մի թանձր, սև ամպի տակ, այդ ժամանակ ընդհանուր խաւարի մէջ ծառերն ընդունում էին սև ու այլանդակ պատկերներ։ Թեթե, բայց ցուրտ աշնանային հովը փրշում էր, սլաքնում էր ծառերի գեղնած տերեւների վերջին մնացորդները և նրանք մէկիկ-մէկիկ ընկնում էին հազիւ լսելի խշշոցով։ Լուսինը մէկ էլ լուսաւորեց պարտէզը և այդ ժամանակ ինչպէս մի վայրկեանական աչքի երևոյթ ես նկատեցի ծառերի տակ մի զոյգ մարդկային ստուերներ, որոնք և շտապով դիմեցին դէպի մի մութ ծառախումբ, ուր շինուած էր բաղեղապատ վերանդա. այնտեղ, այն վերանդայում ծածկուեցին հաւանականաբար։ Ո՛չ մի կասկած չը կար, մէկը Մեդուզան էր, իսկ միւսը՝ երիտասարդ գերմանացին, և այսպէս հանելուկը լուծւում էր. կէս գիշերից յետոյ նա պարտէզ էր գալիս և օրիորդը ցած էր իջնում ու նրանք տեսակցում էին։ Ապա քիչ յետոյ ես տեսայ ծեր գնդապետին ծառերի մէջ, նա քայլում էր դարան մտած կատուի զգուշութեամբ և աշխատում էր մնալ ստուերներում։ Նա մերթ կանգ էր առնում, կարծես շունչ առնելու և ականջ դնելու համար, մերթ ծնկների վրայ էր ընկնում, մերթ սողում էր չոր գերանների և խոնաւ գետնի վրայ և երբեմն էլ կուշ է կուշ էր առաջ գնում դէպի նոյն վերանդան, ուր թագնուեցին սիրահարները։ Խանդոտութիւնն ու վիշտը որ բուն էին գրեւ նրա սրբում օձի պէս, այդ ծեր ջարդուած մարմնին տուել էին

նաև օձի ճկունութիւն. նա գալարւում էր ոստերի մէջ, սողում էր գետնին և շարունակ առաջ էր գնում առանց ուշք դարձնելու ցրտին, խոնաութեանը, չը նայելով որ գլխաբաց էր երևում: Վերջապէս նա մօտեցաւ և թագնուեց ծառերի յետևում: Ես դուրս եկայ պատշգամբ. ծառախումբն ու վերանդան, ուր թագնուեցին նրանք, հեռու չէր պատշգամբից և քամին գիշերային խաղաղութեան մէջ բերում էր մինչև ինձ սիրահարների փսիսոցն ու համբոյրների ձայները:

—Ա՛խ, ինչպէս անխոհեմ եղար դու անցեալ օրը Մօն-Պելլրէնի զբօսանքի ժամանակ, ասաց Մեդուզան:

—Ես չէի անխոհեմը, այլ դձու, իմ հրեշտակ. ինչո՞ւ էիր մեզ հրաւիրում ծաղիկն ստանալու համար. ես չը կարողացայ տեսնել, թէ ինչպէս այդ ծեր բաղն օրօրուելով վազում էր դէպի քո ծաղիկը:

—Հապա ձեռնափայտի պատմութիւնը, ասաց առաջին ձայնը:

—Ձեռնափայտի պատմութիւնը... քեզ ո՞վ էր ասում յոգնած ձեւանաս. ես գիտէի, որ դու յետ մնաս, ծերն էլ պիտի մնայ, ես էլ ուզեցի քեզ անպատճառ տանել: Արդարանում ես, չէ՞, դու կարող էիր չը նստել. ինչո՞ւ ընդունեցիր:

—Օ՛, դու չը գիտես, այդ անպիտան ծերուկը իր խանդոտութեամբ, իր անվերջ զգուելի քնքշութեամբ հոգիս բերանս է բերել, դիտմամբ նայեցի, որ տանջեմ, տանջեմ, հոգին դուրս գայ. քթիս տակ միշտ ցցուած է:

—Բայց ի՞նչ վարպետն ես, ի՞նչ չարածճին ես, իմ սիրունիկ Մեդուզա. ինչպէս կարողացար հեշտ լուծել Իազկի խնդիրը:

Լուսթիւն տիրեց, լսում էր միայն փոքրիկ համբոյրների ձայն, փոքրիկ խեղդուած բացականչութիւններ, փսիսուկ:

—Ծերունին հաւատում է քեզ, ասաց երիտասարդը:

—Առաջ աւելի էր հաւատում, այժմ չնորհիւ քո

անխոհեմութեան մի քիչ թթուել է. լաւ որ դու այստեղ չես ապրում:

— Զգուշացիր ամերիկուհուց միայն, նա քեզ նախանձում է, որովհետեւ գեղեցիկ ես, իմ հրեշտակ, և քեզ ատում է, որովհետեւ ամենքը սիրում են քեզ, հոգիս. նա կարող է ծերունուն գայթակղեցնել և մի հարուածով քանդել քո ծրագիրը:

— Անհոգ կաց, հեշտութեամբ կը հանգստացնեմ, ծերին խաբելը դժուար չէ, միայն թէ աչքով չը տեսնի. մի համբոյր և ֆնացածը...

— Օ՛հ, դաւաճան, ճշաց յանկարծ ծերը մի այնպիսի ձայնով, որ կարծես կուրծքը պատառուեց. ապա կանգնած տեղում օրօրուեց և ծառի բնին յենուած, սողալով ընկաւ գետին թուլացած:

Ես շտապով ցած իջայ, վազեցի պարտէզ. նա կրծկուել էր ծառի տակ և ամբողջ մարմնով դողդողում էր տենդով բռնուածի պէս. բռնեցի, բարձրացրի և նրստեցրի մօտիկ նստարանի վրայ:

— Ա՛խ, սրբան բարի էք, պարոն, ասաց նա, չաբը այնքանք են, նա մատը մեկնեց դէպի վերանդան, որտեղից հէնց նոյն րոպէին գուրս եկան երկու ստուերները և անյայտացան զանազան կողմեր:

Ես փորձեցի ներս տանել ծերունուն, յիշեցնելով, որ պարտէզը խոնաւ է, ինքը թեթեւ հագնուած, հողաթափերով, գլխաբաց:

— Ինչո՞ւ համար ապրեզ այսուհետեւ, ասաց նա, գլուխը ձեռքերի մէջ առաւ և դառն կերպով հեկեկալ սկսեց: Ծերութիւնից և վշտից երեխայ դարձած, նա էլ հպարտութիւն չունէր, և լալիս էր ինչպէս լաց կը լինէր մի մոռացուած, մայրը կորցրած մանուկ: Ես բռնեցի նրա վտիտ, դողդողուն ձեռքը, չիմանալով ինչպէս մի թարեմ այդ ջարդուած ծերունուն:

— Որքան էի սիրում նրան, Տէր Աստուած, և ինչպէս խաբեց ինձ. չար, չար, խորամանկ օձ, թունաւոր օձ: Կտակն էր շտապեցնում... Եթէ ամերիկուհին չը գրէր

ինձ... Ապրուշ, ապուշ գլուխ, վաթսուներկնդ տարին քեզ ոչինչ չէ սովորեցրել. ես հաւատում էի, թէ ինձ սիրում է...

Նա կրկին հեկեկաց:

— Չար, չար է աշխարհը, այնպէս չէ, պարոն...

Խեղճ, նա մոռացել էր, որ աշխարհի չարն ու բարին այստեղ գործ չունեն, որ տիեզերական օրէնքներն են անողոք, անփոփոխելի. նա չէր տեսնում այս կամ մաց-կամաց մեռնող բնութիւնը, չէր նկատում իր ճերմակ գլխին թափուող դեղնած տերեւները, որոնք տեղ էին բաց անում նոր, կանաչ տերեւներին, նա դեռ ապրել էր ուզում: Վայելել, սիրել, էլի, էլի... և լալիս էր երեխայի պէս, որ չի կարողանում բռնել լուսնի շողը, վերջալոյսի փայլը, փախչող ստուերը: Իր անզօրութեան մէջ նա անիծում էր բախտը, արտասուում էր իմ կրծքի վրայ և ողբում էր իր անցած օրերը, իր վառ անդարձ երիտասարդութիւնը, երբ կեանքը խինդ էր և ծերութիւնն ու ցաւերը թւում էին անհնարին: Ես խորին ցաւով էի նայում այդ հեկեկացող վշտահար ծերունուն, այդ յոգնած, մաշուած սրտում բուն դրած սէրը յիշեցնում էր ինձ վերջալոյսի մի ուշացած շող, որ խեղդւում է վրայ հասնող համատարած խաւարից. յիշեցնում էր ինձ գերեզմանի ամուլ կրծքից դուրս ցցուած մի ծիլ, աշնանը ծառի վրայ օրօրուող մի կանաչ տերեւ, չոր խոտերի մէջ կծկուած մի վտիտ ծաղիկ, որոնք բոլորն էլ ասես հոգեվարքի վերջին օրհասական ցնցումները լինին:

Քամին փչում էր պաղ-պաղ, վերից մեռած տերեւները շարունակում էին թափուել այդ վշտաբեկ ծեր գլխի վրայ և իրանց մեղմ փափսոցով ասես կրկնում էին՝ «էլի էլի», և ծերունին արտասուում էր այդ տերեւների հետ, մեռնող բնութեան հետ և նրա հեկեկոցի մէջ ես լսում էի բոլոր հոգեվարք արարածների յաւիտենական երգը՝ «էլի, էլի...»

Ա. Ա.ՆԱՐՈՆԵԱՆ